

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

18. 01. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Է. Մացակյանը, Վ. Գևորգյանը, Դ. Մանուչարյանը, Ա. Շահվերդյանը, Հ. Մկրտչյանը, Լ. Բերոյանը, Մ. Սարգսյանը, Ն. Սարգսյանը, Ա. Աղլոյանը, Ա. Սահակյանը, Է. Հախվերդյանը- մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա. Չատինյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում`

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց`

1. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`
ա/ Անհրաժեշտ հսկողություն սահմանել բժշկական կազմակերպությունների աշխատանքների նկատմամբ, որպեսզի բացառվեն բնակչության կողմից բողոքները և դժգոհությունները` կապված սուր վարակիչ հիվանդությունների և վիրուսների կանխարգելման և բուժման հետ:
բ/ Ճշտել ՀՀ Կառավարության կողմից նպաստառու ընտանիքներին տրամադրվող հեռուստատեսային թվային բլոկների բաշխման գործընթացը և անհրաժեշտ հսկողություն սահմանել կատարման ընթացքի նկատմամբ:
2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին`
Մինչև սույն թվականի մարտի 31-ը, սահմանված կարգով, ներկայացնել մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
3. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`
Առաջարկել համայնքների ղեկավարներին` 2016թ-ի համար իրատեսական հայտեր ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:
/ժամկետ` 1 շաբաթ/
4. Մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Լ. Բերոյանին`
Մարզպետարանի ենթակայության կազմակերպություններում հերթական ներքին աուդիտ անցկացնելուց հետո` համեմատական վերլուծություններ կատարել նախորդ ստուգումների արդյունքների հետ և ներկայացնել առաջարկություններ` թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/